



ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՅԱՆ  
ԲԱՆԱՍՏԵՂԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՊԵՏԶՐԱՏ



1937

891 99  
F-89

891.99  
F-89

ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՅԱՆ

01 JAN 2006  
19 NOV 2011

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՊԵՏԶՐԱՏ  
Երևան—1937

6 MAR 2013

Գառ. խմբագիր՝ Գ. Չապլին  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբազրիչ՝ Մ. Գուլագյան



719  
37

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ...

Քեզ բյո՛ւր վողջույն, իմ հայրենիք,  
Խորհրդային պայծառ աշխարհ,  
Քո զավակին եմ հույզերով լի,  
Ձայնով հստակ, խոսքով արդար:  
Կզան օրեր, կանցնեն հերթով,  
Յեվ յես հաստատ իմ քնարին,  
Պետք է յերգեմ հոգո՛վ, սրտո՛վ  
Փառքն ու հմայքն իմ աշխարհի:  
Յես տեսնում եմ քո ճամպեքում  
Հրաշագեղ մի լույս գալիք  
Յեվ յես քո՛նն եմ, քեզ եմ յերգում,  
Խորհրդային իմ հայրենիք:

---

## ՅԵՐԳ՝ ԳՐՎԱԾ ՄԻ ՅԵՐԵԿՈՒ

Աբովյան փողոցի  
յերիտասարդ անցորդներին

Հորդ անձրևն է բարդիները լվացել  
Յեվ ծառերն են քնքուշ բեռով ծանրացել,  
Ի՛նչ անուշ է այս յերեկոն, գեղեցի՛կ—  
Յեվ ծառերը, և մայթերը փողոցի:

Հովն անուշ չնգչնգում է, փսփսում,  
Արդյոք սիրո չքնաղ յերգ է նա հյուսում,  
Թե՞ նրբահյուս, այնքան վճիռ ծաղկանց մեջ  
Այս իրիկվա քնքուշ յերգն է մրմնջում:

Յես նայում եմ մանկահասակ ծառերի  
Չքնաղագեղ, դեռափթիթ խմբերին  
Յեվ ուրախ եմ, և զգում եմ քաղցր դող,  
Աներեվույթ զգացումից լուսաշող...

Հազար աղջիկ, հազար տղա թե-թեի,  
Նոր խոհերով, այնքան թեթև, գեղանի,  
Անցնում են, տե՛ս, բյուր շարքերով լուսերես,  
Բոցավառում ջահել հոգիս հրակեղ:

Որորվեցե՛ք, կանաչ ծառեր, ծփանքով,  
Որորվեցե՛ք, ձեր հասակով նրբածին,  
Չե՞ վոր այսոր ձեր շարքի մեջ հրճվաճքով  
Յերջանկության չքնաղ ծառը տնկեցի...

Ի՛նչ թեթև է այս յերեկո իմ հոգին,  
Լեցուն կյանքի հմայքներով թանկագին,  
Լեցուն հազար խորհուրդներով նորարաց,  
Պա՛ իմ հոգում հավետ մի բո՛րբ լուսարաց:

## ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍԲ

Главное в нас,  
Это — наша  
Страна Советов,  
Советская стройка,  
Советская знамя,  
Советское солнце...  
В. А. Маяковский

Ազատ ե յերկրի՛րն իմ, յերկնի պես անձայր ե  
Յերկնի պես շողում ե ուր-գիշեր,  
Քանի վոր աշխարհում ամենից պայծառն ե,  
Կարո՞ղ ենք, կարո՞ղ ենք—չհիշել:  
Միլիոն կին ու մանուկ, և աղա՛, և աղջի՛կ,  
Աստղակերտ մեր յերկրի լույսի տակ,  
Մի նոր կյանք են կերտում և ապրում  
յերջանիկ,  
Իմ յերկրի՛ր, դու մեր մա՛յր արեգակ:  
Կլինի՞, ասա՛ ինձ, վորտեղ ել լինենք մենք,  
Վորքան ել հեռացած իրարից,

Մոռանանք, վոր մեկտեղ ապրում ու չնչում  
ենք

Յեվ թանգ ե մեր աշխարհն ամենից:

Ահա մութն ե իջնում, վառվում են աստղերը,  
Յերեկոն ե փովում անմարմին,  
Ձգո՞ւմ ես, թե ինչպես հորդում ե քո սերը  
Յեվ դո՛վք ես կարդում դու-մեր յերկրին:  
Այդ ժամին, տե՛ս, հեռվում հսկում ե  
սասմանը,

Իմ և քո ընկերը միշտ արթո՛ւն,  
Վոր վոչ մի թշնամի չանցնի մեր աշխարհը,  
Վորտեղ մենք նոր ուղի յենք հարթում:—  
Իսկ յերբ լույսն ե բացվում, մի չքնաղ  
արշալույս,

Մեր յերկրի կամարնե՛րն են թնդում,  
Հրճվո՛ւմ ենք յես ու դու, ասում ենք  
«բարի լո՛ւյս»,—

Ու մեզ հետ միլիոն մարդ ե խնդում:  
Գնո՛ւմ ես, ընկե՛ր իմ, հարավից դեպ հյուսիս,  
Մեր յերկրի մի ծայրից—մյուս ծայր,  
Բայց ելիմեկտե՛ղ ենք, միլիոն ենք, սիրելիս,  
Մեր սերը ո՛ւժը—անձայր ե...  
Յեվ միայն յես կուզեմ, վոր վորտեղ ել լինես,  
Մեր յերկրի վոր ծայրում հեռավոր,  
Միշտ հիշե՛ս, միշտ հիշե՛ս և սրտում վա՛ռ  
սլահես

Մեր ուխտը—ամենից վառավոր:

Այդ ուխտն ե՛ պահպանել մեր Կարմիր  
յերկիրը,

Ուր մարդը ապրում է ու հրճվում,  
Լինել միշտ նրա քա՛ջ և արթուն զինվորը  
Յեւ մեռնե՛լ, վոնց հերոսն է մեռնում:

Միլիոն են, ընկե՛ր իմ, մեր կյանքի դռները,  
Գնում ես յերգով քո—միշտ արդա՛ր,  
Գնո՛ւմ ես, տա՛ր քեզ հետ չմարող իմ սերը  
Յեւ այս իմ խոսքերը քեզ հետ տար:



### ՅԵՐԿԱԹԵ ՖԵԼԻԲՍ

Ֆելի՛քսն է այդ, Ժողովրդի հզոր վորդին,  
Ֆելիքս յերկա՛թ, Ֆելիքս պողպա՛տ, անվախ  
մարտիկ,

Արծիւլ ասենք,— լայնություն եր նրա հոգին,  
Պայքարների ովկիանոսի դուռ տիտանիկ:

Նա թե առավ մեծ պրոլետար դասակարգից,

Մարտեր մղեց, դիրքեր յելավ բազմաքանակ,

Տեսավ բանտեր ու աքսորներ դաժանալից,

Դարձավ հերոս, Հոկտեմբերի կարմիր

զաւակ:

Հրե կամա՛ր, փառքով անմա՛ր, ընկե՛ր

Ֆելիքս,

Դասակարգի դատաստանի մեծ արսենալ,

Յելար կովի, յեղար արի, փոթորկալի,

Ահա յե՛րգս, ահա խո՛սքս պատվիր համար:

Փաբոսները յերկնասլաց թող լո՛ւյս առնեն  
Կրօնի ու բոց, արեգնափայլ, հուր աչքերից :

— Կանգնիր իմ յերգ, կանգնիր և դու  
արիացած  
Ու պատվիր՝ առ, մեծ Ֆելիքսն և աշխտեղ  
փայլում...

Կանգնած է նա Վոնց անխորտակ մի  
 հուշարձան,  
 Ազատության մեծ մարտերի անմահ Ֆեւրիքս,  
 Սիրտը՝ բոսոր, ինքը հզոր, ահազնաճայն,  
 Համբէ՛ւ պայծառ, փառքո՛ւլ անծայր,

\_\_\_\_\_

Ուր ել հասնեմ, յես քոնն եմ,  
Քո զավակը անտրտում,  
Նոր աշխարհը յերգողն եմ,  
Քո վառ սերը իմ սրտում:  
Քո վառ սերը թանկագին,  
Փարոսի պես բոցավառ,  
Նորափթիթ իմ յերգին  
Լույս ե տալիս անդադար...

**Keywords:**

## ԿՈՄՅԵՐԻՏԻ ՊԱՐՏՔԸ

Այսքա՛ն առատ հույզեր ու սեր,  
Այսքա՛ն փայլուն, վառվող հույսեր,  
Յես ո՞ւմն եմ պարտք իմ յերգերով,  
Կոմ յերիտի զույգ ձեռքերով:

Հենց խոսքերս յերգ են դառնում  
Ու գրիչս ձեռքս եմ առնում,  
Միայն մի աստղ ամենքից վա՛ռ  
Ինձ ե նայում աշնպես պայծառ:

Այդ յերկիրն ե իմ լուսավոր,  
Անպարտելի ու փառավոր,  
Վորին պարտք եմ յես զույգ ձեռքով  
Յեւ ըստ ըստ իմ նոր յերգով:

## ՍԱՅԼՎՈՐ ՏՂԱ

Փոքրի՛կ տղա, սայլվո՛ր տղա,  
Ազա՛տ, ուրա՛խ, պայծառ տղա.  
Տեսա յես քեզ գյուղի ճամբին,  
Գյուղի ճամբին— լճի ափին.—  
Փոքրի՛կ տղա, սայլվո՛ր տղա,  
Լճի նման վճի՛տ տղա:

Հագիդ ունես կապույտ չապիկ,  
Կապած բարակ, կարմիր գոտիկ,  
Քշիւր յեզդ, յերգիւր ուրախ,  
Հոգով զուլալ, սրտով անվախ.  
Անո՛ւշ—անո՛ւշ, ջան իմ տղա,  
Ծով աչքերով սայլվո՛ր տղա:

Արեւն ելավ կապեց կամար,  
Փոքրիկ արեւ դու մեզ համար,  
Լիճը ծփաց արիք—ալիք,  
Դու լավ տղա, պայծառ գալիք.

Պատի՛կ-պատի՛կ ջա՛ն իմ տղա,  
Սև մազերով սալլի՛ր տղա:

Այսոր փոքրիկ մի մանուկ ես,  
Մեր լայն յերկրի դալար ճյուղն ես,  
Վաղը կերթաս Կարմիր Մոսկով,  
Կգաս լեցուն վոսկե խոսքով,  
Սալլի՛ր տղա, հեյ ջա՛ն տղա,  
Ազատ յերկրի— ազա՛տ տղա:

ԱՐԻ՛, ԱՐԻ՛ ՄԵՐ ԻԼԻ՛Զ...

Հոկտեմբերիկ Նինելի յերգը

Յես կանգնած եմ նկարիդ դեմ կարոտով,  
Մեր մե՛ծ ընկեր, մեր թանկագին ուսուցիչ,  
Յե՛վ հուզմունքից թրթռացող վառ սրտով  
Քե՛զ եմ նայում, մեր ղեկավա՛ր, մեր Իլի՛չ:  
Դու ժպտում ես իմ Լենինյան անկյունից,  
Քեզ պատել եմ չթառամող վարդերով,  
Ելեկտրական լապտերների լույսերից  
Վառ պսակ եմ հյուսել շուրջդ կարոտով:  
Քո կիսանդրի՞ն փայփայում եմ ջերմ սիրով,  
Նոր յերգեր եմ սովորում յես քո մասին,  
Զարդարում ենք քո անկյունը ամեն ոք  
Հոկտեմբերիկ ընկերներով միասին:  
Արի՛, արի՛ մեր թանկագին ղեկավար,  
Կանչում ե քեզ քո լավ թոռնիկ Նինելը,  
Արի մի տե՛ս, վորքան սիրով քեզ համար  
Լույս ե վառել, ծաղիկ ցանել Նինելը:  
Արի՛, արի՛, մեր լա՛վ պապիկ, մեր Իլի՛չ,  
Միլիոնների առաջնո՛րդ և ուսուցի՛չ:

## ԱՅՍ ԱՌԱՎՈՏ...

Ահա բացվեց անո՛ւշ լույսով այս առավոտ,  
Այս առավոտ վոսկե արև ինձ ծիծաղեց,  
Սիրտս ծփաց, հոգիս զգաց անծիր կարոտ,  
Ո՛հ, ի՛նչ քա՛ղցր ես լուսափրփուր իմ  
առավոտ:

Պատուհանիս դեմ հանդիման մի վառ  
յերկինք,  
Տենչանքիս պես խորունկ ու վեհ, հո՛ւր  
առավոտ,  
Դո՛ւ յես ժպտում լուսե չրթով ջահել սրտիս,  
Ի՛նչ անուշ ես լուսափրփուր իմ առավոտ:

---

## ԾՈՎՆ ԱՌԱՎՈՏՅԱՆ

Հանգիստ ննջում ե ջրերի արքան  
Իր լա՛յն, անսահման փիրուղ անկողնում,  
Արևի հզոր շողերը վոսկյա  
Շուրջպար են բռնել կապույտ ջրերում:  
Փայփայի՛ր, ծո՛վ իմ, քո զով մասներով  
Այս սիրոյ յերգի ամեն մի խոսքը,  
Տուր անհունություն, վոր իմ յերգերով  
Թափանցեմ հզոր ջրերիդ խորքը...

---

7/9  
37

## ԾՈՎԱՓԻՆ

Խոր մանկությունից յերազել եմ յես  
 Լուսնդրել ծովի խորական յերգին,  
 Անծայր ջրերի ծփանքների պես,  
 Ծով իմաստությամբ լցնել իմ հոգին:

Ծփում ե ծովը, ծփո՛ւմ տարածված,  
 Նայում ավերին անվրդո՛ւյ, խաղա՛ղ  
 Յեվ արեծաղի կարոտով վառված  
 Շողում բազմերանգ և լուսաշաղաղ:  
 Թևեր ե առնում իմ փնտռող հոգին  
 Այս կապույտ ծովի անվրդով ավին  
 Ու թվում ե ինձ յերգերիս վրա  
 Իջնում ե պայծառ, նրբակերտ արփին:  
 Յեվ ճերմակածին ծովահավի պես  
 Թռչում ե հոգիս կապույտ վոլորտում,  
 Ազա՛տ, անվեհեր և արևակեղ—  
 Այն ծովի վրա,  
 Լա՛յն ծովի վրա...

## ՈՒՐԱԽ ՊԱՏԿԵՐ

Յես անցնում եմ դաշտի միջով,  
 Շուրջս չքնաղ ծաղկանց մի ծով,  
 Ծաղկանց մի ծով—չուշա՛ն, կակա՛չ,  
 Յեվ զմրուխտե անծայր կանաչ:  
 Այդ ծով դաշտի լուսե յեզրին  
 Որորվում ե չքնաղ լորին,  
 Սիրուն լորին ծաղկած մի ծառ,  
 Արևի տակ բորբ ու պայծառ:  
 Դաշտի միջին հովն ե խաղում,  
 Հուր արևը լույս ե մաղում,  
 Ծաղկած դաշտում լույսի մի ծով,  
 Յես քայլում եմ դաշտի միջով...

ՄԻԱՅՆ ՄԻ ՀԱՅԱՑՔ...

Քրոջս հեշատակին

Միայն մի հայացք, միայն զուլգ աչեր,  
Մի՞թե կարող են, ո՞ր, նրանք հանգչել,—  
Միայն մի հայացք սիրառատ ու ջերմ:  
Աղամա՛նդ, գոհա՛ր,— թանկագին դու քար,  
Հրեղեն արմատ— արևի պես վառ,  
Արևի պես վառ, արևից պայծառ:

Միայն մի հայացք, միայն զուլգ աչեր,  
Մի՞թե կարող են, ո՞ր, նրանք հանգչել...

ՅԵՂՋԵՐՈՒ

Լեռան ծայրին յեղջերուն,  
Պայծառ ցուքն աչքերում,  
Ո՞ւր ե նայում աճյալես հեղ,  
Ինքը քնքուշ հովի պես:  
Արդյոք ի՞նչ ե նա տենչում,  
Արդյոք ո՞ւմն ե նա կանչում,  
Թե՞ դյուրթված ե արևի  
Իրիկնային չողերի  
Լույս հմայքից չքացող—  
Լեռնաշխարհին քուն բերող...  
Մեկ ել կանչեց նա հանկարծ՝  
Ապառաժից թռավ ցած,  
Կորավ հեռո՛ւ ծմակում,  
Թողեց միայն իմ հողում  
Այս պատկերը լուսաչող,  
Հազար կրա՛կ, հազար չո՛ղ...  
Այն թովոուն յեղջերուն—  
Լույս հմայքը աչքերում:

Իսկ լուսինը լուռ քայլում է,  
Շուրջն անտակ լույսի ծով  
Յեւ այդ ծովում խոր նիրհում են  
Դաշտ ու անտառ, սար ու ձոր:

---

## ԼՈՒՍՆՅԱԿ ԳԻՇԵՐ

Լուսնյակն անուշ լուս յերկնքում  
Այն ի՞նչ հեքյաթ է ասում,  
Վոր անսահման տիեզերքում  
Շնչում է, փափսում...  
Իսկ աստղերի գորգն անծայր  
Լուռ լսում է լուսնյակին,  
Վոր շողերով վառ ու պայծառ  
Լույս է տալիս ամենքին:

Միայն մաքուր, ջիւղ առվակն է,  
Վոր մի քարի արանքում  
Յերեկ, գիշեր գլգլում է,  
Յեւ կանչո՛ւմ է, և յերգո՛ւմ:  
Լուսնի լույսով զգեստ հագած  
Բյուր ծառերը անտառում  
Գլուխները թեքել են ցած,  
Լո՛ւռ խորհում են, մտորում:

## ԱՄՊՐՈՊ

Сентябрь холодный бушевал,  
С деревьев ржавый лист валялся...  
Ф. Тютчев

Ամպերն իջան և լեռները պատեցին,  
Եւ չեն փայլում գազաթները ձյունանիստ,  
Ծառերը լուռ կատարները չարժեցին,  
Մըմնջում է ծեր անտառը անհանգիստ:  
Ահա դանդաղ, սակայն հաստատ քայլերով,  
Վոնց յերկնքի ամենազոր տիրակալ:  
Մութ ամպերը հավաքվեցին խմբերով  
Քեզ չքացան պատկերները դյուրթական:  
Հեռո՛ւ, մոտիկ մութ սարերի փեշերին  
Խուլ մունչաց փոթորիկը թևավոր,  
Թռան դողով տերևները ծառերի  
Յեւ լացեցին առվակները բյուրավոր:

Պայթե՛ց յերկնում գոռ ամպրոպն ահավոր,  
Կայծակները շողշողացին, փայլեցին,  
Մութ անտառում կաղնիները դարավոր  
Դժկամությամբ գլուխները թեքեցին:  
Խենթ վորոտա՛ց հորիզոնը ամեհի,  
Տազնապ ապրող գազանի պես մունչաց  
Յեւ հեղեղը բարձրունքներից յերկնային  
Հզոր թափով գահավիժեց դեպի ցած:

## ԳՅՈԹԵՅԻՆ

Թե մեկ ել դաս դու աշխարհ,  
 Նստես կանաչ պարտիզում,  
 Ուր ծառերը մեղմաբար  
 Շշնջում են ու խոսում,  
 Հետո քնքուշ մոտենաս  
 Առվի ափի վարդենուն,  
 Անո՛ւշ յերգեր մրմնջաս,  
 Յերգդ թողնես թերթերում,  
 Յես մանկան պես կլազեմ  
 Յեվ կարոտով անսահման  
 Հազար ծաղիկ կփռեմ  
 Ճամպաներում անհամար,  
 Ուղիներում անհամար,—  
 Անմա՛հ պոեստ, քեզ համար:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Իմաստո՛ւն, անմա՛հ, լուսավոր դու մարդ,  
 Խոսքի պարտիզում անթառամ դու վարդ,  
 Քո խոր, հորդառատ յերգերիդ թափից,  
 Սիրտս ուռչում ե, բարձրանում ափից...

Աղբյուրի պես ջինջ, հստակ ու մաքուր,  
 Յես քո հմայքի կարոտն եմ ապրում,  
 Դու անգի՛ն պոեստ, չողչողուն ու մեծ,  
 Անմա՛ր, անսպա՛ռ, պայծա՛ռ բանաստեղծ:



Չկա քույրիկս, նա հուշ ե դարձել,  
Չկա աղջիկը լուսառատ դեմքով,  
Շատ տարիներ են յեկել ու անցել,  
Նրան եմ հիշում իմ այս նոր յերգով,  
Հիշում եմ նրան կարծես յերազում,  
Վորպես մի աստղ սիրո յերկնքի  
Յեւ խոր ջերմությամբ այս յերգն եմ ասում  
Ու պսակ հյուսում պայծառ քույրիկիս:  
Արի՛, յե՛տ արի, լուսավոր աղջիկ,  
Անցած մանկության իմ քնքուշ ընկեր,  
Քո վառվող սերը յերբեք չի՛ հանգչի,—  
Իմ սեր, իմ յերազ, գանգրահեր աղջիկ:  
Տե՛ս, քանի մանուկ, քանի՛ պատանի  
Քայլում են հաստատ յերջանիկ դարում,  
Մի ամբողջ սերունդ բախտավոր կյանքի  
Ջահեր ե վառում մեր նոր աշխարհում:  
Արի՛, յե՛տ արի, արի՛ կրկին տուն,  
Ապրենք ու յերգենք, քայլենք միասին,  
Չե՞ փոր հեռացար, խամբեցիր տրտում,  
Կարոտ մնացիր մեր հզոր լույսին...  
Արի՛, յե՛տ արի, արի՛ կրկին տուն:

### ՅԵՐԳ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄԻՋԻՑ

Ե՛յ, կանաչ սարեր, զմրուխտ արոտներ  
Յեւ մեր կուսական, մթին անտառներ,  
Կրկին յեկել եմ յես բազկատարած,  
Մեր զով հովերից բյուր թեւեր առած:  
Լսո՞ւմ եք դուք ինձ, յես լուր եմ բերել,  
Յեկել եմ կրկին ծաղիկներ քաղեմ:

Յեւ այս գույնգույն, լույս ծաղիկները,  
Վորոնց հմայիչ պայծառ փնջերը  
Հազար մանուկի կյանք են պարգեւել,  
Հազար չրթերից համբույր ենք քաղել,  
Դիտե՞ն, թե ինչու ահա յես կրկին  
Այցի յեմ յեկել նրանց համայնքին:

Կար մի ժամանակ, յերբ այս սարերում,  
Այս կանաչազարդ, զով արոտներում  
Ընկերոջս հետ այնքան սիրելի,  
Թուխ գառնուկների, թմբլիկ ուլերի  
Հոտն եյինք պահում. յերկու գառնարած,  
Յերկու մանուկներ թեւ-թեւի տված:

Վաղ առավոտյան կաքաւն եր յերգում,  
 Սառն առվակների ջուրն եր զընգում,  
 Իսկ մենք լեռնական յերկու մանուկներ,  
 Առած կաղնուտում կտրած մահակներ,  
 Սարն եյինք քշում գառները, վազում,  
 Հետն ել մանկական բյուր յերգեր ասում:  
 Նախշուն հավքի պես թռան որերը,  
 Վերում մնացին սեզ գազաթները,  
 Իջանք հանգերից, մեր արոտներից,  
 Կանաչ-կուսական բարձր սարերից,  
 Քաղաք գնացինք հրձվանքով անծայր,  
 Նոր ուղի բացվեց շողշողուն, պայծառ:  
 Յերկու գյուղական առույգ մանուկներ,  
 Յերկու գառնարած, յերկու լավ ընկեր,  
 Նոր աշխարհ մտանք թեւ-թեւի տված,  
 Նորաբաց կյանքի հավատով վառված:



Ե՛յ, կանաչ սարեր, զմրուխտ արոտներ,  
 Յեւ մեր կուսական, մթին անտառներ,  
 Վողջույն ե բերել ձեր հին ընկերը,  
 Սրտում փայփայել լեռների սերը:  
 Լսո՞ւմ եք դուք ինձ, յես լուր եմ բերել,  
 Յեկել եմ առատ ծաղիկներ քաղեմ:  
 Գնում ե ընկերս... հիշո՞ւմ եք նրան,  
 Գառնարած Մոսուն՝ ուրա՛խ, թովոան,  
 Հիշո՞ւմ եք նրա սրինգը խոսուն,  
 Վոր ենպես զուլալ յերգեր եր ասում,

Վոր գիթ, վայրենի այծյամի նման  
 Սարերն եր յենում յերգով աննման:  
 Գնում ե ընկերս... «հեռավոր Մոսկով»,  
 Վոր յես դա լեցուն գիտության խոսքով,  
 Դիտե՞ք ինչպիսի տղա յե դառել,  
 Դիտե՞ք ինչպիսի հասակ ե առել:  
 Բայց ո՞վ եր տեսել, վոր սեւ անցյալում,  
 Յերբ բիրտ տերերի մտրակն եր իշխում,  
 Մեր են տավարած Համբոյի վորդին  
 Եղպես կյանք առնի ու կանգնի վոտի,  
 Դնա քաղաքներ, գիտնական դառնա,  
 Հաղար լուսավոր, նոր դռներ բանա:  
 Դե կյա՞նք մաղթեցեք այս նոր աշխարհին,  
 Վոր եսպես մեծ ե, եսպես վիթխարի,  
 Վորի շողշողուն, կանաչ պարտիզում  
 Եսպես քաղցրահամ մրգեր են հասնում,  
 Ա՛յ, ենպես քաղցր, վոնց վոր մեր Մոսին,  
 Վոր արժանացավ արեւի լույսին:



Ե՛յ, մեր մանկության բարձրաբերձ սարեր,  
 Ե՛յ դուք կուսական, մթին անտառներ,  
 Կրկին գալիս եմ յես բազկատարած,  
 Մեր զով հովերից բյուր թեւեր առած,  
 Լսո՞ւմ եք, թե ինչ նոր լուր եմ բերել,  
 Յեկել եմ առատ ծաղիկներ քաղեմ:  
 Ծաղիկներ քաղեմ՝ չուշան ու կակաչ,  
 Սարերը յենեմ հզո՞ր, բարձրալանջ

Յեւ ծաղիկներէց փնջեր սիրասուն  
Տանեմ իմ ընկեր գառնարած Մոսուն:  
Ա՛ռ ծաղիկները, ընկե՛ր թանկագին,  
Թող վե՛ր բարձրանա քո ազատ հոգին,  
Լցված նոր կյանքի կենսարար լույսով,  
Պայծառ գալիքի շողշողուն հույսով...

---

## ԽՈՀ ՅԵՐԿՆՔԻ ՄԱՍԻՆ

1.

Յես կանգնել եմ խոր գիշերին պարտիզում,  
Յերբ աստղերը շշնջում են ու խոսում,  
Հզոր յերկնի անհուն ծովը կապուտակ  
Տարածվել եր դեպի հեռուն անհատակ...  
Չքնաղ ուռին լուսնի լուսով վողողված,  
Լուռ խորհում եր գլուխը ցած խոնարհած.—  
Յես մի մանուկ—նայում եյի հեռավոր  
Բյուր աստղերին, լույս յերկնքին փառավար,  
Վոչ մի ափ կա, վոչ դադարի հանգրվան,  
Ուղիներն են հեռո՛ւ, անտա՛կ, անսահմա՛ն,  
Ո՞ւր ե սկիզբը, ո՞ւր ե վերջը այս ծովի,  
Այս ողեղեն անծայրածիր ովկիանի:  
Հզո՛ր յերկինք, միլիո՛ն աստղեր և լուսին,  
Խորհում եյի յես մի մանուկ ձեր մասին,  
Չեյի գտնում հագուրդ տվող պատասխան  
Դո լուսեղեն ճամպաներում անսահման:  
Դո՛ւ, մանկուլթյան յերազների հո՛ւր վարկյան,

Դուք ցնորքներ, դուք անուրջներ մանկական,  
 Վոր թե՛վ առած ճախրում եյիք յերկնքի  
 Բազմախորհուրդ ուղիներում լայնածիր,  
 Լցրել եյիք մանուկ հոգիս դյուլթանքով,  
 Այդ հեռավոր կրակների պատրանքով,  
 Յես մի մանուկ ճամպա եյի վորոնում  
 Հաղարավոր ասուպների աշխարհում...  
 Սակայն անցաք դուք անուրջներ մանկական,  
 Յես մտել եմ ուրիշ հասակ դյուլթական,  
 Ուր Լենինյան—Ստալինյան հանճարի  
 Արեգակն ե իմ մտքերին լույս տալիս:  
 Այս գիշեր ել միտք եմ անում անդադար,  
 Յե՛վ պատմության ուղիներում անհամար,  
 Փնտռում մարդու հզոր մտքի խուլական  
 Թռիչքները դեպ գիտության Ապագան...  
 Շողացել են քանի՛—քանի՛ հանճարներ,  
 Դարձել չափի, տարածության տիտաններ.  
 Դո՛ւք, Արքիմեդ և Մարկոնի՛, Եդիսոն,  
 Վոր չողում էք գազաթներում մինչ այսօր,  
 Ձեր վառ հոգին հավեռ փնտռող ու անքուն,  
 Կոպերնիկի մտքի նման աննկուն,  
 Ձի ընկճվել սատրապների լծի տակ,  
 Մնացել էք վիթխարակերտ, անխորտակ  
 Յե՛վ գիտության հորիզոնում դարավոր  
 Ձեր ցոլացող աստղը թողել լուսավոր:

Ստալինյան լուսարձակով հանճարեղ  
 Հասել ենք մենք մի կայարան փառահեղ  
 Յե՛վ կերտում ենք Խորհրդային աստղի տակ  
 Մի նոր աշխարհ իմաստությամբ անհատակ:  
 Բարձրանում ե իմ մայր յերկրի պարտիզում  
 Յերջանկության յերգը չրթին մի սերունդ,  
 Վոր ամենքից պայծառ ե ու փառահեղ  
 Յե՛վ քաջարի, և՛ լուսահորդ, և՛ չքեղ:  
 Ո՛ր, դեռ կգա Արքիմեդը մեր հզոր,  
 Դեռ կըծնվի նոր, վիթխարի Եդիսոն,  
 Վոր բարձրացած մեր աշխարհից թանկագին,  
 Ձուլված պայծառ—կոմունիզմի բանակին,  
 Կրգրուցեն արդեն հաղթված յերկնի հետ,  
 Կենեն լուսնի ամեն շավիղ, արահետ,  
 Տիեզերքի կայաններում կխոսեն,  
 Ասուպները նրանց պսակ կհյուսեն:  
 Վորպես պարզե՛վ հավե՛տ ազատ նոր մար—  
 դուն՝

Կլինի մի աստեղային խնդություն,  
 Վոր չի յեղել վոչ մի տեղ ու ժամանակ  
 Արեգակի հաղարամյա լույսի տակ:

\*\*\*

Ձե՛զ, պալիքի հզորազոր հանճարներ,  
 Վոր կծնվեք մեր աշխարհում կենսաբեր,  
 Ձեզ եմ ուղղում իմ այս յերգը հեռավոր,  
 Վորպես ազա՛տ, խորհրդային մի զինվոր:

Քեզ բոլոր վողջուն, խորհրդային նոր սե-  
րունդ,


Ստալինյան իմ բախտավոր ժողովուրդ,  
Վոր պիտ վառես արեգակներ անհատնում,  
Համայնական մեր յերջանիկ աշխարհում:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

|                                     |    |
|-------------------------------------|----|
| 1. Խորհրդային իմ հայրենիք . . . . . | 3  |
| 2. Յերգ՝ գրված մի յերեկո . . . . .  | 4  |
| 3. Հրաժեշտի խոսք . . . . .          | 6  |
| 4. Յերկաթե Ֆելիսս . . . . .         | 9  |
| 5. Կոմյերիսմիությանը . . . . .      | 11 |
| 6. Կոմյերիսի պարտքը . . . . .       | 12 |
| 7. Սայլվոր տղա . . . . .            | 13 |
| 8. Արի՛, արի՛ մեր Իլյիչ . . . . .   | 15 |
| 9. Այս առավոտ . . . . .             | 16 |
| 10. Ծովն առավոտյան . . . . .        | 17 |
| 11. Ծովափին . . . . .               | 18 |
| 12. Ուրախ պատկեր . . . . .          | 19 |
| 13. Միայն մի հայացք . . . . .       | 20 |
| 14. Յեղջերու . . . . .              | 21 |
| 15. Լուսնյակ գիշեր . . . . .        | 22 |
| 16. Ամսրոպ . . . . .                | 25 |
| 17. Գյոթեյին . . . . .              | 26 |
| 18. Հովհաննես Թումանյանին . . . . . | 27 |
| 19. *** . . . . .                   | 28 |
| 20. Յերգ ծաղիկների միջից . . . . .  | 29 |
| 21. Խոհ յերկնի մասին . . . . .      | 33 |



Հրատ. № 4186. Գլավլիտի լիազոր Խ—9208

Պատվեր 951. Տիրաժ 2000

Թղթի չափսը 72×110. Տպադրական 11¼ մամուլ.

Մեկ մամուլում 40960 նիշ. Հեղինակային 11¼ մամ.

---

Պետհրատի տպարան, Յերևան. 1937

գրք 10.

467

24405

ГУРГЕН БОРЯН  
СТИХИ

ГИЗ ССР А 1937 ЕРЕВАН